



ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. 1-ին կիսամյակ



Համառոտ ակնարկ

Մեր հիմնական ձեռքբերումները

Արտաքին միջավայր

Մենք՝ բանկային համակարգում

Ռազմավարական հաշվետվություն

Ռիսկերի կառավարում



Համառոտ ակնարկ Մեր հիմնական ձեռքբերումները

Բացարձակ առաջատարն ըստ 2019թ. 1-ին կիսամյակի արդյունքների

803 մլրդ ՀՀ դրամի ակտիվներ

1-ին

710 մլրդ ՀՀ դրամի պարտավորություններ

1-ին

561 մլրդ ՀՀ դրամի զուտ վարկային պորտֆել

1-ին

93 մլրդ ՀՀ դրամի կապիտալ

1-ին

5.6 մլրդ ՀՀ դրամի շահույթ

1-ին

- Ամերիաբանկը EMEA Finance և Euromoney ամսագրերի կողմից ճանաչվել է Հայաստանի լավագույն բանկ:
- Ամերիաբանկը և Սիթիբանկը առևտրի ֆինանսավորման համատեքստում կնքել են նոր գործարք, որի շրջանակներում Ամերիաբանկը Սիթիբանկից ներգրավել է շուրջ 14 մլն ԱՄՆ դոլարի վարկային միջոցներ:
- Ամերիաբանկը և Ավստրիական Զարգացման Բանկը (OeFB) կնքել են 30 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր: Վարկային միջոցներն ուղղվելու են փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ), ինչպես նաև Հայաստանում վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտներում իրականացվող նախագծերի ֆինանսավորմանը:
- Moody's-ն Ամերիաբանկի համար վերահաստատել է “B1”/”B2”/”Ba3” համապատասխանաբար ազգային արժույթով երկարաժամկետ ավանդների, արտարժույթով երկարաժամկետ ավանդների և կոնտրագենտի ռիսկի երկարաժամկետ վարկանիշները:
- Ամերիաբանկը և ՕԴԵԿ-ի միջազգային վարգացման հիմնադրամը (OFID) կնքեցին 25 մլն ՄՆ դոլարի վարկային պայմանագիր՝ ուղղված Հայաստանում արտաքին առևտրի վարգացմանը:

emeafinance
Europe • Middle East • Africa

EUROMONEY

citi

OeEB

MOODY'S






Տնտեսություն

Ազգային արժույթ՝ հայկական դրամ
 Բնակչություն՝ 3 մլն
 ՀՆԱ՝ 12.4 մլրդ (2018, ԱՄՆ դոլարի ընթացիկ փոխարժեքով)
 Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ՝ 4,188 (2018, ԱՄՆ դոլարի ընթացիկ փոխարժեքով)
 Իրական ՀՆԱ տարեկան աճ (2018)՝ 5.2%
 ՀՆԱ միջին տարեկան աճ (2013-2018)՝ 3.8%


ՀՆԱ-ի աճի և գնաճի դինամիկան 2013 -2019



Վարկանիշ

Moody's-ի վարկանիշ՝ B1 (դրական)
 Fitch-ի վարկանիշ՝ B+ (դրական)

ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ արտադրության ճյուղերի







Մենք՝ բանկային համակարգում




ԱԿՏԻՎՆԵՐ




ՎԱՐԿԵՐ



ԱՎԱՆԴՆԵՐ ԵՎ ԹՈՂԱՐԿԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐ




ՇԱՀՈՒՅԹ






Մենք՝ բանկային համակարգում

Ակտիվների եկամտաբերություն




Շուկա Ամերիաբանկ

Կապիտալի եկամտաբերություն




Շուկա Ամերիաբանկ

Զուտ տոկոսային մարժա




Շուկա Ամերիաբանկ

Ծախսերի հարաբերությունը եկամտին



Շուկա Ամերիաբանկ

Կապիտալի համարժեքություն



Շուկա Ամերիաբանկ



Ռապիդարական հաշվետվություն



Ռազմավարական հաշվետվություն

Ամերիաբանկի ռազմավարությունը և դրանից բխող գործողությունները հիմնվում են մեր **Առաքելության** և **Տեսլականի** վրա:

Առաքելության

- Տրամադրել **միջազգային որակի** ֆինանսական ծառայություններ և գործարար լուծումներ
- Իրականացնել հասարակության **բարօրության** համար նշանակալի բիզնես և սոցիալական ծրագրեր
- Ձևավորելով յուրահատուկ կորպորատիվ մշակույթ և միջազգային ընկերության վարձագման մեր սեփական մոդելը՝ **միավորել հաջողակ մարդկանց**
- Շարունակաբար ավելացնել մեր **բաժնետիրական արժեքը**

Տեսլական

- Դառնալ ֆինանսական և գործարար լուծումներ տրամադրող **միջազգային ընկերություն**
- Լինել թիրախային շուկաների **առաջատարն սպասարկման որակով ու արդյունավետությամբ**՝ ներգրավելով ընդհանուր արժեքներ կրող բացառիկ մարդկանց




Ռազմավարական հաշվետվություն

Բացի մեր առաքելությամբ ու տեսլականով սահմանված խնդիրների, մենք սահմանել ենք նաև միջնաժամկետ զարգացման հիմնական ուղղությունները, որոնց հիման վրա պլանավորում ենք մեր գործունեությունը և կայացնում որոշումները:

<p>Լինել ՇՈՒԿԱՅԻ ԱՌԱՋԱՏԱՐԸ՝ աճել առաջանցիկ տեմպերով, դիտարկել միաձուլումների և ձեռքբերումների հնարավորություններ</p>	<p>Բարձրացնել ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ապահովել կապիտալի եկամտաբերության պատշաճ մակարդակ՝ ցածր ծախսատարության պայմաններում</p>	<p>Բարձրացնել ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՅԻ աստիճանը՝ հիմնական շեշտը դնելով մանրածախ և ՓՄՁ ծառայությունների և բանկային գործարքների մասնաբաժնի ընդլայնման վրա</p>	<p>Ընդլայնել ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ՝ լինել հաճախորդակենտրոն Բանկի գործունեության բոլոր ուղղություններում, ապահովել հաճախորդների լոյալության և բավարարվածության ինդեքսի ամենաբարձր ցուցանիշները</p>	<p>Ընդլայնել ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ծավալները՝ դառնալ հեռահար բանկային ծառայություններ մատուցող առաջատար բանկ՝ հնարավորինս ավտոմատացնելով բոլոր գործընթացները:</p>
---	---	--	--	---



Ռազմավարական հաշվետվություն





Ռիսկերի կառավարում



✓ Մակրոտնտեսական ռիսկեր

2019թ.-ի առաջին կիսամյակում ՀՀ տնտեսության և բանկային համակարգի աճի վրա ազդող հիմնական գործոնները ինչպես և նախորդ տարի հիմնականում կապված էին նոր քաղաքական իշխանության հաստատման հետ, ինչի հետևանքով ի հայտ են գալիս այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ որոշակի անորոշության մթնոլորտը խոշոր տնտեսավարողների շրջանում, արտաքին ուղղակի ներդրումների սակավություն, պետական ֆինանսավորման ծրագրերի մասնակի դադարեցում կամ հետաձգում, տարածաշրջանում վիճված հակամարտության հետ կապված որոշակի լարվածության հնարավոր աճ: Մյուս կողմից, որոշակի դրական ազդեցություն են ունեցել գլոբալ միտումները, մասնավորապես ԱՄՆ դոլարի թուլացման տեղեկացրելով կապված տոկոսադրույքների քաղաքականության մեղմացման հետ, էներգակիրների շուկայի և ՌԴ ֆինանսական համակարգի որոշակի կայունությունը, պղնձի և մոլիբդենի գների վուսպ տատանողականությունը, վարգացող երկրների պարտքային արժեթղթերի գնային աճը:

Մակրոտնտեսական միջավայրի սպասումները մինչև տարեվերջ հիմնականում դրական են, անորոշության պզակի մասը կապված է ԱՄՆ և Չինաստանի միջև լարվածության սրացման և որպես հետևանք մետաղների և էներգակիրների շուկաներում տատանողականության աճի հետ, ինչը կարող է իր ազդեցությունն ունենալ ՀՀ ներքին ֆինանսական շուկայի միտումների վրա:

✓ Վարկային ռիսկ

Ամերիաբանկի չաշխատող վարկերի մասնաբաժինը (ըստ \$ՀՄՍ մեթոդաբանության) կամել է 3.9%, որը չի գերազանցում Բանկի կողմից սահմանված ընդունելի մակարդակը: Հնարավոր կորուստերի պահուստը ծածկում է չաշխատող վարկերի ծավալի 58%-ը:

Ելնելով վարկային ռիսկի վաղ ահապանգման հիմնական ցուցանիշներից (KRI), ռիսկի սպասումները հաջորդ կիսամյակում ամբողջությամբ տեղավորվում են Բանկի ռիսկի ախորժակում: Սպասվող մակրոտնտեսական միտումների պարագայում ակնկալվում է, որ վարկային պորտֆելի որակը կհամապատասխանի պլանային ցուցանիշներին:



✓ Շուկայական ռիսկեր

Շուկայական ռիսկերից առաջացած կորուստները 2019թ.-ի առաջին կիսամյակի արդյուքներով եղել են Բանկում սահմանված ռիսկի ախորժակի սահմաններում: Շուկայական ռիսկի համար նախատեսված կորուստների մակարդակը չի գերազանցել ընդունելի ցուցանիշի 5%-ը: Բաց արտարժույթային դիրքերը բացարձակ մեծությամբ միջինում չեն գերազանցել Բանկի կապիտալի 4%-ը:

Տոկոսադրույքի ռիսկի տեսակետից միտումները նույնպես դրական են, հաշվի առնելով լողացող տոկոսադրույքով ներգրավված միջոցների բաց դիրքի էական կրճատումը 2019թ.-ի առաջին կիսամյակում (շուրջ երեք անգամ), ինչպես նաև LIBOR-ի նվազելու տրենդը:

Արժեթղթերի պորտֆելի շուկայական ռիսկի մակարդակը չի գերազանցել հատկացված ռիսկի ախորժակը: Բանկի արժեթղթերի պորտֆելը հիմնականում բաղկացած է ՀՀ պետական պարտատոմսերից (շուրջ 90%), ինչն էապես զսպում է պորտֆելում վարկային ռիսկը: Ոչ պետական կապմակերպությունների պարտատոմսերը ձեռք են բերվում համաձայն անհատական սահմանաչափերի՝ հիմնված յուրաքանչյուր թողարկողի ֆինանսական վերլուծության վրա:

✓ Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության բոլոր գործակիցներն անգամ ամենաբացասական սթրեսային սցենարների դեպքում համապատասխանում են ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջներին: 2019թ.-ի առաջին կիսամյակում իրացվելիության ռիսկը ոչ էական էր և զսպվում էր ընդհանուր ռիսկի պարամետրերի համակարգի շրջանակներում: Հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ Բանկի ավելցուկային իրացվելիության մակարդակը կազմել է շուրջ 70 մլրդ դրամ ինչը բավարար է ցպահանջ ավանդների և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ավելի քան 30%-ի ակնթարթային արտահոսք ենթադրող սթրեսային սցենարի դեպքում, որն ունի չնչին հավանականություն՝ ներկայիս մակրոտնտեսական միջավայրի և սպասումների պայմաններում:



✓ **Գործառնական ռիսկեր**

Ներքին գործընթացների կարգավորման և վերահսկման շնորհիվ բանկը գործառնական ռիսկը պահում է ցածր մակարդակի վրա: 2019թ. 1-ին կիսամյակի կրած ընդհանուր գործառնական վնասը չի գերազանցել կապիտալի 0.003%-ը: Վնասի հիմնական մասը գրանցվել է արտաքին խարդախություն խմբում: Տարեցտարի ավելանում է Ամերիաբանկի՝ հեռահար բանկային ծառայություններից օգտվող հաճախորդների և քարտապանների թիվը: Գործառնական վնասն ընդունելի մակարդակում է և ցուցանիշի էական վատթարացում չի ակնկալվում:

Ուշադրության կենտրոնում են շարունակում մնալ տեղեկատվական տեխնոլոգիաները, ՏՏ անվտանգության ապահովման մեխանիզմները, տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերը, ընթացիկ պրոյեկտները և նոր ներդրված համակարգերը:

✓ **Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկեր**

Բանկի վարկավորման գործընթացները և Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի կառավարման քաղաքականությունը նպատակ ունեն կառավարելի դարձնել ֆինանսավորվող ծրագրերի ապդեցությունը շրջակա միջավայրի վրա և գործել կայուն վարձացման նպատակներին զուգահեռ: Վարկային պորտֆելի շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերը գնահատվել են որպես ընդունելի: Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի ավելի քան 80%-ը գտնվում է ցածր և միջին ռիսկի գոտում: ,Բարձր Աե դասի՝ էական Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկեր պարունակող վարկառուներ Բանկի վարկային պորտֆելում առկա չեն, իսկ Միջավայրի ստանդարտներով և ՀՀ օրենսդրությամբ արգելված գործունեություններ բանկը չի ֆինանսավորում:

✓ **Այլ ռիսկեր**

Բանկի ֆինանսական վիճակի վրա հաշվետու ժամանակաշրջանում էական ապդեցություն չեն գործել համբավի, իրավական և բիզնես մոդելի (մարտավարության) ռիսկերը: Շնորհիվ Բանկում ներդրված գործընթացների և համակարգերի նշված ռիսկերը կառավարվում են պատշաճ մակարդակով և բացասական սպասումներ ընթացիկ տարվա ընթացքում չեն ձևավորվել:



ԱՄՓՈՓՈՒՄ



2019թ.-ի առաջին կիսամյակում բանկը չգերազանցեց նախանշված ռիսկի ախորժակը: Ավելին, չօգտագործված ռիսկի ախորժակի մասնաբաժինը կազմել է ընդհանուր սահմանաչափի 50%-ը:

Փաստացի վնասը ամբողջությամբ փոխհատուցվել է բանկի կապիտալի հաշվին, և կապիտալի համարժեքության ցուցանիշը ողջ ժամանակահատվածում ընդունելի մակարդակի վրա էր:

2019թ.-ի առաջին կիսամյակում ռիսկի հիմնական աղբյուրը վարկային ռիսկն էր: Ռիսկի այլ աղբյուրներից առաջացած վնասները չեն ունեցել էական ազդեցություն Բանկի ֆինանսական վիճակի վրա:



2019թ. 1-ին կիսամյակի ֆինանսական
հաշվետվություններ



Հաշվետու թողարկողի
պատասխանատու անձանց
հայտարարություն

